

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՆԻՍԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

**Ք. Գավառ**

**22.01.2022թ.**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.**

2022թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 26-ը: **Օրակարգ՝**

1. ԳՊՀ 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուսումնական տարվա անելիքների ներկայացում /զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

2. Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի քննարկում, դիտարկումների ներկայացում /ԳՊՀ ինքնավերլուծության իրականացման աշխատանքային խմբի անդամներ/

3. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ.-** ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուսումնական տարվա անելիքների մասին: Զեկուցողը նախ ներկայացրեց այն մարտահրավերները, որոնք բուհի առաջ ծառայել էին համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության և ռազմական գործողությունների հետևանքով: Պատերազմի օրերին էլ համալսարանը շարունակեց իր աշխատանքները, սակայն արդեն երկու ուղղություններով՝ շարունակեց իրականացնել իր կրթադաստիարակչական գործունեությունը տարածաշրջանում և միաժամանակ բոլոր հնարավոր ձևերով զորավիգ լինել հայրենիքի հերոս պաշտպաններին: Այնուհետ զեկուցողն անդրադարձավ կատարված աշխատանքներին, նշեց, որ ուսումնական գործընթացը հստակ կազմակերպվեց առցանց ձևաչափով, դասերն ընթանում էին արդեն հեռավար ուսուցման հարթակում ստեղծված վիրտուալ լսարաններում: Ընթացքում բարելավվեցին ուսուցման, աշխատանքների կատարման համար անհրաժեշտ առցանց էլեկտրոնային հարթակները: Միջոցներ են ձեռնարկվել կրթական գործընթացների որակի ապահովման, ՏՀՏ-ի հետ աշխատելու կարողությունների զարգացման, համալսարանի ստորաբաժանումների փոխհամաձայնեցված գործունեության ապահովման ուղղություններով: Համալսարանը շարունակել է իր աշխատանքները ՌԾ-ում նախատեսված բոլոր ոլորտներում: Զեկուցողի կողմից ներկայացվեցին ինը գերակա ուղղություններով իրականացված աշխատանքները: Համալսարանի գործունեության արդյունավետությունը որոշելու նպատակով ՈԱԲ-ի կողմից անցկացվում են տարաբնույթ պարբերական հարցումներ, իրականացվում է վերլուծություն, մշակվում են բարելավման պլաններ:

Ռ.Հակոբյանը ներկայացրեց նոր՝ 2021-2022 ուսումնական տարվա հիմնական անելիքները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի՝ ԳՊՀ 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2021-2022 ուստարվա հիմնական

անելիքներն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:

**ԼՍԵՑԻՆ.-** ԳՊՀ ինքնավերլուծության իրականացման աշխատանքային խմբի անդամների զեկուցումները ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ: Ձեկուցողները նշեցին, որ բուհի ինքնավերլուծությունն իրականացվել է միասնական մոտեցմամբ և վերջին հաշվով կոլեկտիվ ու համախմբված աշխատանքի արդյունք է: Միաժամանակ աշխատանքային խմբերից յուրաքանչյուրը պատասխանատու էր որոշակի չափանիշների ներկայացման համար: Ձեկույցի նախնական տարբերակը գնահատման տեսակետից ընդունելի է, քանի որ ինը չափանիշով գնահատվել է բավարար և միայն մեկ չափանիշով՝ հետազոտական ուղղությամբ՝ անբավարար, ինչի հետ ինքնավերլուծություն իրականացնող խումբն այնքան էլ համակարծիք չէ՝ կապված նշված ոլորտում համալսարանի ակնհայտ ձեռքբերումների, կազմակերպած ամենամյա գիտաժողովների, տարեկան հրատարակած՝ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հրապարակման համար ընդունելի ԳՊՀ երկու գիտական պարբերականների հետ: Այսպիսով, զեկուցողները ներկայացրին նաև իրենց անհամաձայնությունը փորձագիտական զեկույցի նախնական տարբերակում արտահայտված մի շարք նկատառումների հետ: Նրանք առաջարկեցին իրենց այդ դիտարկումները ներառել պատասխան գրության մեջ: Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը քննարկվել է ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում, որին մասնակցել են բոլոր աշխատակիցները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-**1. Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի նախնական տարբերակն ընդունել ի գիտություն:

2. ԳՊՀ աշխատանքային խմբի դիտարկումները ներառել փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի պատասխան գրության մեջ և ներկայացնել Որակի ապահովման ազգային կենտրոնին և փորձագիտական խմբին:

Գիտխորհրդի նախագահ՝  
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան  
Թ.Ասոյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

**Ք. Գավառ**

**26.02.2022թ.**

2022թ. փետրվարի 26-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 23-ը: **Օրակարգ՝**

1. ԳՊՀ-ում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման

արդյունքների մասին /զեկուցող՝ ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/

2. «Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու»-ի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգ»-ի փոփոխությունների նախագծի մասին /զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

3. 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման վերաբերյալ /զեկուցողներ՝ առկա ուսուցման ֆակուլտետների դեկաններ, հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան, ամբիոնների վարիչներ/

4. Ընթացիկ հարցեր

**ԼՍԵՑԻՆ.**- ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյանի զեկուցումը ուսանողների շրջանում անցկացրած հարցումների մասին: Զեկուցողը նշեց, որ հարցումները նպատակ են ունեցել բացահայտելու ուսանողների բավարարվածության աստիճանը մասնագիտական կրթական ծրագրերում /ՄԿԾ/ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի արդյունավետությունից: Շնորհանդեսի միջոցով ցույց տրվեցին հարցումների արդյունքները, և կատարվեց դրանց վերլուծությունը: Հարցումների պատասխաններում հանդիպում են նաև բացասական դիտարկումներ, սակայն դրանք աննշան տոկոս են կազմում և հիմնականում հանդիսանում են տեղեկացվածության պակասի հետևանք:

Հարցի շուրջ արտահայտվեցին ռեկտոր Ռ.Հակոբյանը, պրոռեկտոր Ն.Կուտուզյանը, դեկաններ Հ.Ղաջոյանը, Մ.Ավագյանը, որոնք իրենց դիտարկումներն արեցին հարցաշարի, հարցումների արդյունքների վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- 1.ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյանի զեկուցումն ընդունելի գիտություն:

2.Հարցումների արդյունքները տրամադրել ֆակուլտետներին՝ ուսումնասիրելու և անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկելու նպատակով:

3.Հանձնարարել ԳՊՀ որակի ապահովման բաժնին՝ իրականացնել հարցաշարերի պարբերական թարմացումներ և բարելավումներ:

**ԼՍԵՑԻՆ.**-ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ««Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու»-ի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգ»-ի փոփոխությունների նախագծի մասին: Զեկուցողն ասաց, որ ժամանակի ընթացքում փոխվել են տպագրության տրված հոդվածների բնագրերի ներկայացման և ձևավորման պահանջները: Վերջին շրջանում անհրաժեշտություն է դարձել հոդվածներ տպագրել միջազգային վարկանիշ ունեցող պարբերականներում և այդ չափանիշները կիրառել ԳՊՀ գիտական պարբերականին ներկայացվող հոդվածների նկատմամբ, առավել ևս, որ ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուն ներառված է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ընդունելի պարբերականների ցանկում: Այնուհետև ներկայացվեցին կարգում կատարված փոփոխությունները: Կարևորվեց այն հանգամանքը, որ այդ փոփոխությունների մասին պետք է ապահովել տեղեկատվություն բոլոր շահակիցներին, հեղինակներին: Նշվեց, որ նախագիծը քննարկվել է ամբիոններում: Հարցի շուրջ արտահայտվեցին ռեկտոր Ռ.Հակոբյանը, բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանը: Նրանք

հիմնավորեցին չափանիշների վերանայման, նոր նույնականացուցիչների (<ՏԴ, DOI) կիրառման անհրաժեշտությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**-1. Ընդունել ««Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու»-ի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգ»-ում կատարված փոփոխությունները և հաստատել կարգը կատարված փոփոխություններով:

2. Հանձնարարել արտաքին կապերի և լրատվության բաժնին՝ ապահովելու տեղեկատվություն կատարված փոփոխությունների մասին:

**ԼՍԵՑԻՆ.**-ԳՊՀ ֆակուլտետների դեկանների, հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկանի, ամբիոնների վարիչների զեկուցումները 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման վերաբերյալ: Նրանք գիտխորհրդին զեկուցեցին, որ մշտական աշխատանքներ են տարվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ուղղությամբ, տեղի են ունենում ուսանողների և գիտական ղեկավարների հետ պարբերական հանդիպումներ և՛ առկա, և՛ հեռավար ձևաչափերով, ուսանողները տեղեկացվել են աշխատանքների կատարման ժամանակացույցի մասին: Կարգաբերվում են ավարտական կուրսերի ուսանողների փաստաթղթերը, կատարվում են աշխատանքներ արխիվում: Ուսանողները տեղեկացվում են ուսման վարձերի պարտքերի մասին: Աշխատանքները կատարվում են մշակված ժամանակացույցին համապատասխան:

Հարցի շուրջ արտահայտվեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա ընդգծեց այդ գործընթացի կարևորությունը՝ ասելով, որ ամբողջ ուսուցման և ուսումնառության ընթացքի ընդհանուր պատկերը՝ կատարված աշխատանքի արդյունավետությունը, դրական ու բացասական միտումները, ի հայտ է գալիս ամփոփիչ ատեստավորման գործընթացում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**-1. ԳՊՀ-ում 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման վերաբերյալ զեկուցումներն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին՝ ամփոփիչ ատեստավորման ողջ գործընթացը կազմակերպել և անցկացնել սահմանված կարգով և ժամանակացույցին համապատասխան:

Գիտխորհրդի նախագահ՝  
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան  
Թ.Ասոյան

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.

**Ք. Գավառ**

**24. 03. 2022թ.**

2022թ. մարտի 24-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 26-ը: **Օրակարգ՝**

1. ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների, մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացման մասին /զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյան/
2. «Գավառի պետական համալսարանում հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ»-ի փոփոխությունների մասին /զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/
3. Գավառի պետական համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի հիման վրա բարելավման գործողությունների ծրագրի ներկայացում /զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/
4. Ընթացիկ հարցեր

**ԼՍԵՑԻՆ.-** ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանի զեկուցումը ամբիոնի 2020-2021 ուստարվա գործունեության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին: Վ.Գրիգորյանը ներկայացրեց ընդունելության, ուսանողների շարժի և առաջադիմության տվյալները, ՄԿԾ-ների արդիականացման, ուսպլանների և առարկայական ծրագրերի վերանայման և թարմացման ուղղությամբ կատարված աշխատանքները: Ուշադրություն դարձվեց ամբիոնում կատարվող հետազոտական աշխատանքներին բանահյուսության, հայ և արտասահմանյան գրականության, արդի գրականության, հայոց լեզվի, արևմտահայերենի բնագավառներում: Ամբիոնի դասախոսները մասնակցում են գիտաժողովների, հանդես են գալիս հետաքրքիր զեկուցումներով և հրապարակումներով: Գիտահետազոտական լուրջ ուսումնասիրություններ են տարվում ՀՀ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմայի ուղղությամբ: Զեկուցողը ներկայացրեց նաև ուսանողների հետ տարվող աշխատանքները, կարևորեց ավարտական կուրսերի ուսանողներին ամեն կերպ աջակցելու, խորհրդատվություն իրականացնելու, ավարտական և մագիստրոսական աշխատանքները պատշաճ մակարդակով պաշտպանության ներկայացնելու գործընթացները: Նշվեցին նաև դպրոցների, այլ ուսումնական հաստատությունների, մշակութային կենտրոնների հետ համագործակցելու խնդիրները:

Վ.Գրիգորյանը ներկայացրեց հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանի հաշվետվությունը ամբիոնի 2020-2021 ուստարվա գործունեության վերաբերյալ ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

**ԼՍԵՑԻՆ.-**ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարանում հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ»-ի փոփոխությունների մասին: Զեկուցողը ներկայացրեց

այն փոփոխությունները, որոնք կատարվել են կարգում՝ հաշվի առնելով, որ առցանց ուսուցման չափաբաժինն աստիճանաբար նվազում է:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** - Հաստատել «Գավառի պետական համալսարանում հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ»-ը՝ փոփոխություններով:

**ԼՍԵՑԻՆ.** - ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի հիման վրա բարելավման գործողությունների ծրագրի մասին: Ձեկուցողն ասաց, որ արդեն գիտխորհրդի ս.թ. հունվարի 22-ի նիստում քննարկվել է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը և աշխատանքային խմբերը արտահայտել են իրենց դիտարկումները, որի մասին տեղեկացվել է փորձագիտական խումբը: ԳՊՀ ներկայացրած տեսակետները հաշվի առնելով՝ կազմվել է վերջնական զեկույցը, որի հիմքով կազմվել է ԳՊՀ բարելավման գործողությունների ծրագիր: ԳՊՀ աշխատակազմը պետք է ակտիվորեն աշխատի բարելավման ծրագիրն իրականացնելու, նկատված թերությունները շտկելու ուղղությամբ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** - Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի հիման վրա մշակված ԳՊՀ բարելավման գործողությունների ծրագրին և այն ներկայացնել Որակի ապահովման ազգային կենտրոնին և փորձագիտական խմբին:

Գիտխորհրդի նախագահ՝  
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան  
Թ.Ասոյան

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.

Ք. Գավառ

02.04.2022թ.

2022թ. ապրիլի 2-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 24-ը: **Օրակարգ՝**

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար թեկնածու առաջադրելու մասին /զեկուցող՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար Հ. Մարգարյան/
2. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների, մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացման մասին /զեկուցող՝ Բնագիտական ֆակուլտետի դեկան Մ. Ավագյան/
3. ԳՊՀ 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման վերաբերյալ /զեկուցող՝ դեկաններ, ամբիոնների վարիչներ/
4. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ.** - «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար թեկնածու առաջադրելու հարցը:

Հարցը ներկայացրեց ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար Հ. Մարգարյանը: Նա ասաց, որ արդեն լրացել է Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը, հայտարարվել է մրցույթ կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար, և ընդունվում են մրցույթին մասնակցելու հայտեր: Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդը կարող է թեկնածու առաջադրել այդ պաշտոնի համար:

Ելույթ ունեցավ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանը: Նա առաջարկեց «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար առաջադրել ԳՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի թեկնածությունը:

Արտահայտվեցին ԳՊՀ բնագիտական, տնտեսագիտական, հումանիտար մասնագիտությունների, բանասիրական ֆակուլտետների դեկաններ Մ. Ավագյանը, Ս. Ամիրխանյանը, Հ. Ղաջոյանը, Թ. Ասոյանը: Նրանք հավանություն տվեցին Ն. Կուտուզյանի առաջարկությանը և նշեցին, որ իր աշխատանքային գործունեության ընթացքում Ռ. Խ. Հակոբյանը, լավագույնս տիրապետելով ՀՀ օրենսդրությանը, ցուցաբերել է կառավարչական անուրանալի հմտություն, ապահովել աշխատանքային, կրթական, բարոյահոգեբանական դրական մթնոլորտ, ակտիվորեն նպաստել ԳՊՀ-ի միջազգայնացմանը, ձևավորել մարդկային բարձր արժեքներով առաջնորդվող կոլեկտիվ:

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար առաջադրված Ռ. Խ. Հակոբյանի թեկնածությունը հաստատելու նպատակով անցկացվեց բաց քվեարկություն, որին մասնակցեց գիտխորհրդի 24 անդամ: Գրանցվեց հետևյալ արդյունքը. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Հիմք ընդունելով արտահայտված կարծիքները, քվեարկության արդյունքը՝ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի անդամները

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- 1.«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար առաջադրել ԳՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի թեկնածությունը:

2. Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի 02.04.2022թ. նիստի որոշումը ԳՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի թեկնածությունը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար առաջադրելու մասին ներկայացնել ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդ:

**ԼՍԵՑԻՆ.**- ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ. Ավագյանի զեկուցումը կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների, ՄԿԾ- ների արդիականացման մասին: Մ. Ավագյանը ներկայացրեց ընդունելության, ուսանողների շարժի և առաջադիմության տվյալները, ՄԿԾ-ների արդիականացման, ուսպլանների և առարկայական ծրագրերի վերանայման և թարմացման ուղղությամբ կատարված աշխատանքները: Ուշադրություն դարձվեց ամբիոնում կատարվող

հետագոտական աշխատանքներին, մասնավորապես միջազգային համագործակցությանը: Ամբիոնի դասախոսները մասնակցում են գիտաժողովների, հանդես են գալիս հետաքրքիր զեկուցումներով և հրապարակումներով: Զեկուցողն անդրադարձավ ուսանողների հետ տարվող աշխատանքներին, ներկայացրեց ամբիոնի զարգացման հիմնական ուղղությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի հաշվետվությունը կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2020-2021 ուստարվա գործունեության վերաբերյալ ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հավանություն տալ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

**ԼՍԵՑԻՆ.-** Դեկանների, ամբիոնների վարիչների զեկուցումները ԳՊՀ 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման վերաբերյալ: Նշվեց, որ հարցը ներկայացվել է նաև ս.թ. փետրվարի 26-ի նիստին: Նրանք գիտխորհրդին զեկուցեցին, որ մշտական աշխատանքներ են տարվել ու տարվում հատկապես ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ուղղությամբ, տեղի են ունենում ուսանողների և գիտական ղեկավարների հետ պարբերական հանդիպումներ և՛ առկա, և՛ հեռավար ձևաչափերով, սահմանվել է նախապաշտպանության ժամանակացույց: Ընթացիկ տարվա մարտի սկզբին ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը պատրաստ էին շուրջ 80 տոկոսով: Շարունակվում են աշխատանքները ավարտական կուրսերի ուսանողների փաստաթղթերի ստուգումների ուղղությամբ՝ ստուգման գրքույկներ, տեղեկագրեր, անձնագրային տվյալներ և այլն: Սկսվել են աշխատանքները արխիվում: Լուծվում են ուսման վարձերի պարտքերի վճարման խնդիրները: Աշխատանքները տարվում են մշակված ժամանակացույցին համապատասխան: Հարցի շուրջ արտահայտվեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը՝ կարևորելով ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունավետ կազմակերպումը և որակյալ ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պատշաճ ներկայացումն ու պաշտպանությունը: Քննարկվեց նաև հարգելի պատճառներ ունեցող շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ձևաչափի հարցը՝ ընդգծելով առանձին դեպքերում ԳՊՀ ամփոփիչ ատեստավորման կարգի համաձայն՝ առցանց պաշտպանության կազմակերպման հնարավորությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-**1. ԳՊՀ 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման աշխատանքների վերաբերյալ զեկուցումներն ընդունել ի գիտություն:

2. Ամփոփիչ ատեստավորման գործընթացն իրականացնել առկա ձևաչափով, իսկ առանձին դեպքերում՝ հարգելի պատճառներ ունեցող շրջանավարտների համար ամփոփիչ ատեստավորումը ԳՊՀ ռեկտորի հրամանով կազմակերպել առցանց ձևաչափով՝ ԳՊՀ ամփոփիչ ատեստավորման կարգի համաձայն:

Գիտխորհրդի նախագահ՝  
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան  
Թ.Ասոյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5.

**Ք. Գավառ**

**27.05.2022թ.**

2022թ. մայիսի 27-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 26-ը: **Օրակարգ՝**

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2022-2027 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունների վերաբերյալ /զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/
2. Գործատուների կողմից ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման արդյունքների մասին /զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան /
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում անցկացված հարցումների արդյունքների վերաբերյալ /զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/
4. Ընթացիկ հարցեր

**ԼՍԵՑԻՆ.**-ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2022-2027 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունների վերաբերյալ: Ռ. Հակոբյանն ասաց, որ հայեցակարգային ուղղություններն ընկած են ԳՊՀ զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի հիմքում: ԳՊՀ 2022-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի նպատակը որակյալ բարձրագույն կրթության և արդյունավետ գիտահետազոտական գործունեության իրականացումն է նորարարական համալսարանում: Զեկուցողը ներկայացրեց զարգացման հինգ գերակա ուղղություններ նախկին՝ 2017-2022 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում ներառված իննի փոխարեն.

1. կրթական-դաստիարակչական,
2. գիտահետազոտական-նորարարական,
3. կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման,
4. սոցիալական պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման,
5. հակակոռուպցիոն գործունեության իրականացման: Ներկայացնելով զարգացման հայեցակարգային ուղղությունների առանձնահատկությունները՝ զեկուցողն անդրադարձավ այլ անելիքների՝ ԳՊՀ 2022-2027 թթ. հակակոռուպցիոն ծրագրի և զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանի մշակում՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և հնգամյա ժամանակահատվածի համար: Տեղի ունեցավ զարգացման հայեցակարգային ուղղությունների շահագրգիռ քննարկում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**-Հավանություն տալ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2022-2027 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունների վերաբերյալ Ռ. Հակոբյանի զեկուցմանը:

**ԼՍԵՑԻՆ.**- ԳՊՀ որակի ապահովման բաժնի (ՈԱԲ) վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյանի զեկուցումները գործատուների կողմից ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների

գնահատման և ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում անցկացված հարցումների արդյունքների մասին: Զեկուցողը շնորհանդես-տեսասահիկներով ներկայացրեց հարցումների արդյունքները: Նա շեշտեց, որ երկու հարցումների արդյունքների վերլուծությունները շատ կարևոր են համալսարանի ռազմավարական զարգացման ուղղությունները որոշարկելիս: Կարևոր են թե՛ գործատուների, թե՛ հանրակրթական դպրոցների աշակերտների արտահայտած կարծիքները համալսարանի, ուսուցանվող մասնագիտական կրթական ծրագրերի, ուսանողների կարողությունների և հմտությունների մասին: Ք.Հայրապետյանը ներկայացրեց հարցումների արդյունքների վերլուծությունը:

Հարցումների արդյունքների և վերլուծության շուրջ ծավալվեց քննարկում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, քննարկել ֆակուլտետներում և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Գիտխորհրդի նախագահ՝  
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան  
Թ.Ասոյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6.

**Ք. Գավառ**

**06.07.2022թ.**

2022թ. հուլիսի 6-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 24-ը: **Օրակարգ՝**

1. ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ /զեկուցող՝ ԲՍՖ դեկան Թ. Ասոյան/
2. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին /զեկուցող՝ ԲԳՖ դեկան Մ. Ավագյան/
3. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ /զեկուցող՝ ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյան/
4. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին /զեկուցող՝ ՏՖ դեկան Ս. Ամիրխանյան/
5. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ /զեկուցող՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/
6. ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների և մասնագրերի, ԳՊՀ դասախոսների ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերի քննարկում և հաստատում /զեկուցող՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/
7. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ.**–Պրոռեկտոր Ն. Կուտուզյանը, դեկաններ Թ. Ասոյանը, Մ.Ավագյանը, Հ.Ղաջոյանը և Ս.Ամիրխանյանը ներկայացրին համապատասխան ֆակուլտետներում 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները: Զեկուցողները նշեցին, որ ատեստավորման գործընթացը իրականացվել է մայիս ամսվա ընթացքում առկա ձևաչափով՝ որոշ բացառություններով: Հարգելի պատճառներ ունեցող ուսանողները ներկայացրել են համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, մասնակցել առցանց նախապաշտպանությանը և հրամանների հիման վրա սահմանված կարգով մասնակցել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությանը: Պաշտպանության ողջ ընթացքը տեսաձայնագրվել է: Ատեստավորման գործընթացն իրականացվել է նախապատրաստական նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ: Նախ ամենօրյա ուշադրության կենտրոնում են եղել ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը՝ սկսած թեմաների ընտրությունից, դրանց արդիականության, տեսական և գործնական նշանակության ապահովման տեսանկյուններից, կառուցվածքաբովանդակային ձևավորումից մինչև նախապաշտպանություն և ապա պաշտպանություն: Մինչ այդ ամփոփվել են ավարտական կուրսերի ուսանողների պրակտիկաների արդյունքները: Ամփոփիչ ատեստավորումից հետո ներկայացվել են զեկուցագրեր՝ շրջանավարտներին դիպլոմներ շնորհելու և բուհն ավարտելու մասին: Ավարտվել են աշխատանքները արխիվում, լուծվել են ուսման վարձերի վճարման խնդիրները: Աշխատանքները կատարվել են մշակված ժամանակացույցին համապատասխան: Ատեստավորումն անցել է աշխատանքային բնականոն մթնոլորտում: Բողոքարկումներ չեն եղել:

Այնուհետև զեկուցողներն անդրադարձան ատեստավորման արդյունքներին՝ նշելով, որ առկա ուսուցման ֆակուլտետներում ավելի շատ են արձանագրվել գերազանց և լավ գնահատականներ, քան հեռակա ուսուցման ֆակուլտետում: Թեև բարեհաջող ատեստավորում են անցել նաև հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողները, որոնց շարքում ևս եղել են գովեստի արժանացած շրջանավարտներ: Զեկուցողները կարևորեցին ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների արտահայտած կարծիքները: Հանձնաժողովների նախագահներն ընդհանուր առմամբ բարձր են գնահատել ուսանողների ցուցաբերած գիտելիքներն ու կարողությունները, թեզեր ու ավարտական աշխատանքներ կատարելու և սահիկաշարեր պատրաստելու հմտությունները: Դրական են գնահատվել թեմաները, որոնք արդիական են և գործնական ուղղվածություն ունեն: Նկատվել են նաև թերություններ, որոնք չեն ազդել ընդհանուր տպավորության վրա:

Զեկուցողները նշեցին, որ հանձնաժողովների կարծիքները հաշվի կառնվեն 2022-2023 ուսումնական տարում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**–ԳՊՀ 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքներն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար:

**ԼՍԵՑԻՆ.**– ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների և մասնագրերի, ԳՊՀ դասախոսների ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերի քննարկման և հաստատման մասին: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023

ուսումնական տարվա ՄԿԾ-ների ուսումնական պլանների և մասնագրերի, ԳՊՀ դասախոսների ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերի նախագիծը, դրանց քննարկման ընթացքը ամբիոններում և ֆակուլտետներում: Նշեց, որ անցկացվել են աշխատաժողովներ ըստ ֆակուլտետների, որոնց ընթացքում քննարկվել են ուսպլանների և մասնագրերի, ԳՊՀ դասախոսների ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերի նախագծի հետ կապված հարցերը:

Ձեկուցված հարցերի շուրջ արտահայտվեցին դեկանները և ամբիոնների վարիչները, որոնք ներկայացրին նշված փաստաթղթերի վերանայման և արդիականացման անհրաժեշտությունը:

Առաջարկվեց հաստատել ՄԿԾ ուսպլանները և մասնագրերը, ԳՊՀ դասախոսների ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**-Հաստատել ԳՊՀ 2022-2023 ուսումնական տարվա մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները և մասնագրերը, ԳՊՀ դասախոսների ակադեմիական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերը:

Գիտխորհրդի նախագահ՝  
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան  
Թ.Ասոյան